Ավելի փոքր բեռների համար գրեթե ամեն տուն պահում էր մեկ կամ ավելի էշ, որով հռչակված էր ոչ միայն հարևան Ղարաբաղը, այլև Զանգեզուրը:

Այժմ պետական լայն խճուղիների և բազմաթիվ կամուրջների ու կանոնավոր ավտոերթևեկության շնորհիվ Զանգեզուրն իր փոխադրական հին ձևերից իսպառ ձեռք է քաշել: Կոլտնտեսային գյուղերը մեծ աշխատանք են տարել պետական մարմինների աջակցությամբ իրենց գյուղերը բարեկարգ ճանապարհներով շրջանների կենտրոններին ու երկաթգծին կապելու համար:

ՉԱՓԵՐ

Երկարության. կա̈զ՝ գազ=*գրեթե մետրի՝ քթի ծայրից մինչև* **մէնծ մանդը՝** *ցուցամատի ծայրը ձգած:*

Ծանրության՝ կշիռը. գիրվանքա[1]=*400 գրամի:* **Չէրվէր**=*100 գրամի՝ մեկ քառորդ գրվանքայի:* **Ռուբ**=*5* **չէրվէրի**=*500 գրամի:*

Ծանրության՝ բեռը. ճօրուն պէռնը՝ *ջորու բեռը*=**5 սոմարի:**

Կես **պէռնը՝ թայը**=*5 փութի:* **Էշին պէռնը**=*3 սոմարի:*

Ծավալի. կնիշ *կամ* **ֆիլ**[2]=*4* **դիգնակնիշի:** *Ջաղացում*=*2* **դինգյան: Դիգնակնիշ**=*5 1/3 գիրվանքայի::* *3* **կնիշ**=*1 փութի:* **Սոմար** *կամ* **մարզան**==*6* **կնիշի**=*2 փութի:*

Հեղուկի-գինու, օղու, ձեթի. փարչ=5 գիրվանքայի: Կօդ=10 փարչի:

Տարածության-մակերեսի, օրինակ, արտի. սոմար=1 սոմարով *ցանվող տարածություն:* **Օրավար**=*1 օրում վարելու տարածություն:*

---

[1] *Մի քանի գյուղերում՝* **խաթիլ:**

[2] *Փայտե* **կնիշի** *երեսին մի երկաթ են կպցնում, որ չափելիս մինչև այդ գիծը լցնեն:*